Զայսպիսի փոյթ և աշխատութիւն մեծ յանձն առ Յովհաննէս Պատրիարք 'ի սէր Ս. Աթոռոյն և գահակալի նորին Գրիգորի սիրելոյն 'ի նմանէ. եւ խնամով եւ որոնել և գտանել զհին արձանագրութիւնս հրովարտակացն Հայոց. զի յաւուրց անտի Տեղակալաց անփոյթ լեալ էին ամենեքեան զայսցանէ, եւ ոչ ումեք փոյթ էր գոնէ նորոգել զայնս. զի նոքա պատաղեալ էին զաղմկաւ իւրեանց. նմին իրի արձանագրութիւնք Հայոց անհետացեալ էին 'ի Կայսերական դիւանէն, և բազմագումար ծախիւք գտին, զոր միանգամ գտին յայլում տեղւոջ, և այսպէս կենդանացան գրեանքն Հայոց 'ի մեռելութենէ և Արքայն Մահմուտ առաջին վաւերացոյց զայնս իւրով ձեռօք, եւ ըստ մտաց նոցին եւ Խաթի Շէրիֆ Հայոց, որպէս գրեցաք 'ի վեր անդր։

Իրրեւ լուան Յոյնք զայսոսիկ՝ աղմկեալ չփոթեցան յոյժ. զի 'ի կարծիս եղեն թէ Հայք նովաւ կարեն պահանջել զվիճակն Հապեշաց, զոր յափշտակեալ էին յառաջագոյն յաւուրս Աստուածատուր Պատրիարքի, որոյ վասն սկսան հակառակիլ ընդ Հայոց, և յայտնապէս ասել՝ եթէ կամիք խաղաղութեամբ կեալ ընդ մեզ. զայն հրովարտակ (Խաթի Շէրիֆ), զոր առիք 'ի վերջին աւուրս՝ այրեցէք 'ի հուր առաջի աչաց մերոց, որպէս ասէր երբեմն Նահաս Ամոնացի ցորդիսն Իսրայէլի. եթէ կամիք մշտընջենաւոր հաշտութիւն իմ ընդ ձեզ, հանջիք զաջոյ ակն ձեր։ Քանզի Յոյնք երկնչին հանապազօր յափշտակել ըզվանս Ս. Յակոբայ, տիրել երից հետեւակաց, արտաքսել 'ի տաճարէն Ս. Յարութեան, և զրկել 'ի Ս. Տեղեաց եւ 'ի քաղաքէն սրբոյ։ Սակայն լռեցին առ ժամն և սպասէին դիպող առթի. զի 'ի նմին ժամանակի Վէզիրն մեծ՝ Հէքիմ օղլու Ալի Փաշա՝ էր 'ի կողմն Հայոց, նմին իրի ոչ յաջողեցաւ գործն Յունաց, թէպէտեւ ծախեցին բազում ինչ 'ի Դրունս մեծամեծաց։

Այլ իրրեւ փոխեցաւ Վէզիրն՝ և էանց 'ի տեղի նորա Կիւրճի Իսմայիլ Փաշա, աղգաւ Վրացի՝ մատեան առ նա Յոյնք եւ հաւանեցուցեալ դիւրաւ ձգեցին զնա 'ի կողմն իւրեանց՝ ընդ որ և զմեծամեծս Դրան։ Յետ այնորիկ մատուցին առ նա գիր ամբաստանութեան զաղգէն Հայոց,